Այս տեղ ճանապարհն երեքի կը բաժանուի, առաջինը քիչ տեղ ջրի աջ ափի հետ կը տանի և ապա արևելեան հիւսիս և ի հիւսիս կը դառնայ. երկրորդն՝ արեւելեան հիւսիս, երրորդն արևելեան հարաւ, որ Վարդէհօր ճանապարհն է և 1 ½ ժամ խիստ զառիվերով կը բարձրանանք Գումք կոչուած վանքի գիւղն, յորմէ 1 ժամ հարաւ վանքն։

Մենք պիտի բռնենք երկրորդ ճանապարհն, սակայն ձիով անհնարին է բարձրանալ. իջած եմք ձիերէն, հեւալով՝ քրտնելով ¾ ժամ թիք ելն ի վեր բարձրացանք, անցանք նեղ և ահռելի ճանապարհէ, որոյ ձախ կողմն մինչև ձորն վտանգաւոր անդունդ մի կազմուած էր, շարունակեցինք մեր բարձրանալը 5 վայրկենի չափ ևս, այժմ ելած եմք ուղիղ ճանապարհի վերայ, մեր աջ կողմն ու առջևը կտրուած են մեր տեսութենէ, հանգիստ շունչ մը քաշելու, լաւ տեսարան մը ունենալու համար ետև դառնալով նստելու ենք, ահա յանկարծ մեզ ներկայացաւ ամբողջ վիշապաձորի հովիտն ի հարաւոյ, Կապուտայ հովիտն ի հարաւ արևմտից, Մեզ անտեսանելի դարձած է մեզ փափաքելի Կապոյտ բերդն, հին աւուրց ներկայացուցիչն, դա խոնարհած է Կապուտայ ջրի աջ եզրն գտնուող թեւի մը ետև, սակայն նորա փոխարէն դէպի մեզ շեղուած է ամբողջ հովիտն, նաև մեր տեսութեան ներքև ինկան Բօղ-Թէփէ, Աշան և Աղ-Բուլախ լեռներն։ Մեզմէ վայր 1 ժամ ի հիւսիս արևմուտս՝ Վիշապաձորի ջրէն ½ ժամ բարձր դէպի մեզ կայ Զինամէջ քուրդ՝ որոյ մէկ ժամ հիւսիսն Ինկլիճէ հայաբնակ գիւղերն։

Բաւական շունչ քաշեցինք, ձիերն ևս հանգստացան, արածեցին մարդահասակ խոտն. դարձեալ հե-